

- 10. Անխորագիր: Սիրտ իմ ապաքինել բաղձամ ի սրբոյս... Զեռագիր՝ էջմ. 1636, 96ա—97ա:
- 11. Անխորագիր: Սպեղանի իմ խոցերոյս, բժիշկ եւ դեղ ցաւերոյս...
վ. Այլ եւ երգոյս խընդրողի եզբօրս իմ Սրապիոնի...: Տունք՝ ՍԻՄԷՈՆԻ Է ՍԱ: Զեռագիր՝ էջմ. 1636, 97բ—98բ:
- 12. Նորին Սիմէոնի ասացեալ է: Ստեղծողին հրամանաւն բանք անհամար յայտնելոց է... Տունք՝ ՍԻՄԷՈՆԻ Է ՍԱ: Զեռագիր՝ էջմ. 1636, 101ա—102ա:
- 13. Տաղ Ղարիպուքեան: Սրտիկս խոցեալ է սիրով, տէրտէր ունիմ շատ եւ յուրով. Տունք՝ ՍԻՄԷՈՆԻ: Զեռագիր՝ Քէչիշեան, Յուլիան Զմմատու վանաց, Թ. 338, 24բ (ԺԸ): Կոստանեանցի Տաղարան յամէ 1695: Հրտ.՝ Կոստանեանց՝ Մ. Նաղաշ, էջ 55: Տաղարան Կ. Պոլսոյ (անթուական), էջ 127: Չկայ որ եւ է ակնարկութիւն, թէ տաղս Խրըմպէյի որդւոյն ըլլայ. Կոստանեանց կը դրէ (անդ, 55 ծան.) «այս երգիչն է Սիմէոն Խրըմպէյի որդին»:
- 14. Անխորագիր: Սքանչելագործ անճառ արքայից արքայ. Զեմ արժանի կալ ի քո դիմաց հրաշալսործ: Տունք՝ ՍԻՄԷՈՆԻ: Զեռագիր՝ էջմ. 1636, 94ա—95ա:
- 15. Ոտանառք յընտրութիւնն եղիագար կաթողիկոսի: Տաղին սկիզբը կը պակսի.
վ. Յորեկանք թըւոյս Ի եւ երկրորդ լեալ, Կէս յորեկանօք եւ Զ թիւ ընդ այլ (ՌՃԼԱ).
Զ օգոստոսի ամսեանն երգեալ. Սիմէոնն յիմար, սուրբ էջմիածին... Տունք այժմ ||| ԸՄԵՅԻՈՅ, այսինքն՝ [Սիմէոնի Խր]ըմբեցւոյ: Զեռագիր՝ էջմ. 2394, 214ա—215ա (սկ. պակաս): Հմմտ. Կոստանեանց՝ Նոր Ժողովածու, Գ., էջ 6:
Կ'արժէր հաւաքել այս տաղերն եւ հրատարակել:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԵՓԵՑԻՈՅ ՈՂՐ Ի ՄԸՀՆ ԽՆՍՊԵԿ ՔԸՀԱՆԵՑԻ

ԴԱՐՁՆԱԼ Ի ՎԵՐԱՅ ԽԱՍՊԵԿ ՔԱՀԱՆԱՅԻ ՈՐ ՓՈԽԵՑԱԻ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ԱՍԱՅԵԱԼ Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՅԱՅԵՑԻՈՅ

Ի սուգ կոծոյ ողբոյ դառն աղէտագոյն. եւ ձայն լալեաց հեծեաց, յոր կայր սաստկագոյն
Հնչեաց յերկրէ մերմէ կըսկիմ ոյժգնագոյն. վասն մահուան մեծի առնն իմաստնոյն:

Ամենայն տեսակաւ զի վարդարեալ էր, 5
Հողոյ սրբոյ շնորհօքնն նա լըցեալ էր. Լըցեալ որակ որակ առատացեալ էր. եւ մերձեցեալն առ ինքն ոչ անտես առնէր:

Ունէր զբաննս ծածուկ ի խորին մըտաց, 10
Եւ յայտնէր վարժապէս ակորժ տըզիտաց. Հարկիւ բացեայ առնէր ըզգին մարդարտաց, վաճառականն Խասպէկ՝ ցանկալին բազմաց:

Վարդապետաց յաւէտ նա էր խըրատիչ, 15
Ըստահակաց սաստօղ եւ միւրթարիչ. Իսկ հերձուածողացն էր պապանձեցուցիչ, Զեկեալս նոր յուզողութիւն՝ նոցա ընդունիչ:

Ասեմ զբանածին միտքն սըխրալոյն, 20
Գովեմ զերանաշնորհ ձեռքն ըղձալոյն. Զարմանամ ընդ բարբառ օրհնեալ բերանոյն, Գոհութիւն յարագուարճ վարդարողին գնոյն:

Նըման էր առաջնոց հարցն իրաւապէս, 25
Ընդ բընաւիւք ձեւովք անսըխալապէս. Քանդի զտարակուսանս ի զըրոց պէսպէս, Առ ժամայն լուծանէր նա տարագրապէս:

Նա որ ասաց Քրիստոս յաւետարանին 25
Յաղագս ընտրելոցն՝ աւուրքն կարճեցոյն, Եկեալ կատարեցաւ ի վերայ նորին, Զի վաթսուն եւ վեց էր երանելին:

Զեռագիր՝ էջմ. 1636, թղ. 104բ—106ա:
Ընթերցողի՝ Զեռագիրն՝ Խորագիրը. ի վերա: — Ովաննի(ս)է:
1 սուք: — 3 հըչեաց... ոյգնագոյն: — 5 յամենայն: — 10 այտնէր: — 11 բացեալ: — 13 աւէտ: — 16 ուզողութիւն: — 21 յառաջնոց հարձն: — 22 ըն(դ): — 25 աւետարանին:

Ի անեղ բանին հօր նա պիտոյացաւ,
30 վասն այնորիկ յերկրէ յերկինս կոչեցաւ. Զի ընդ քահանայից սըրբոց դասեցաւ, Ըսպասու գոլ փառաց Տեառն արժանացաւ:
Սորա հանդոյն այլուստ ոք ոչ գըրտանի, Ի մէջ ըրարունեաց եւ մենաստանի.
35 Քանդի ամենեցուն նա էր պիտանի, Փիլիսոփայն ներհուն, քահանայն արի:
Եղեր այսօր գեր ի վերայ սրբութեան, Շինեալ անուն կուսին Մօրն անապական. Քեզ տայցեն երանի մինչեւ յաւիտեան,
40 Թէ զըտցես զքեզ հովոզ, դու այլ նորա նման:
Եղեւ վաղճան մերոյ քաջ հոկտորին Ի չըջանիս Հայոց ՌՃԻն. Ընդ իւր շարածաղձեալ երեսուն հընգին, Ամսեան հոկտեմբերի էր քսան եւ իննին:

Հրտ. Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ԲԵԼԳԻՐ ԵՒ ՀՈՅԵՐԸ

ՃԱ. ԳԼՈՒԽ

Լուվէնի երկու եկեղեցական հայագետները, Լըբօն Եւ Մէօյլէրմանս: Նրանց աշխատութիւններն ցուցակն եւ բովանդակութիւնը: Բրիւքսէլի արքայական մատենադարանի հայ գրչագիրներն եւ պարսկերէն Աւետարանը:
Լուվէնի (Louvain) քաղաքը Բելգիայում այն դերն է կատարում ինչ որ Լէյդէնը Հոլլանդայում, այսինքն գրեւ զարոցական, համարարանական քաղաք է, ուր ամէն ինչ յիշեցնում է ուսում եւ կրթութիւն: Բազմաթիւ են այստեղ գիտութեան նուիրուած անձեր, գրեթէ բացառաբար եկեղեցական դասակարգից: Այս շարքում ունինք նաեւ երկու Հայագետ, M. le Chanoine Lebon եւ M. l'abbé J. Muidermans: — Առաջինը, Լըբօն, համարարանի մաս կազմող Collège du Saint Esprit զպրոցի նախագահն է եւ համարարանի Աստուածաբանութեան ուսուցչապետը: Եր-
30 յերկր: — 39 մին աւիտեան: — 43 շարածաղձեալ:

կրօրը, Ժ. Մէօյլէրմանս, որ աւելի երիտասարդ է, նոյնպէս կրօնուսոյց է, բայց նոյն եռանդով զբաղուած է բանասիրական եւ մատենագրական աշխատութիւններով: Տ. Լըբօն՝ Լուվէնի համարարանում ստանձնած է Հայերէնի դասը: Այս դասախօսութիւնը համարարանի ծրագրի մէջ մտել է 1920ից սկսած. դասընթացը երկամեայ է եւ ունի ազատ ունկնդիրներ, այն ուսանողներից — բոլորն էլ Բելգիացի եւ օտար — որոնք կրօնագիտութեան են հետեւում: Այս ուսանողների Հայերէն սովորելու նպատակը քրիստոնէական հին մատենագրութեան հետազոտութիւնն է, որի մէջ Հայկական հին թարգմանութիւնները աննշան սեղ չեն գըրաւում:
Լուվէնի համարարանն ունի իր յատուկ պարբերական հրատարակութիւնը՝ Le Musée, Revue des Etudes Orientales, կոչմամբ, 1882ից սկսած, ուր, զլիաւորաբար, տպւում են համարարանի ուսուցչապետների, ինչպէս նաեւ կողմակի գիտնականների ուսումնասիրութիւնները:
Լըբօնի Հայագիտական աշխատութիւններն, որոնք մինչեւ հիմայ լոյս են տեսած, հետեւեալներն են.
1. Version arménienne et version syriaque de Timothée Elure, այս երկու լեզուով կատարուած հին թարգմանութեան հմտալոյ բաղդատութիւնը. տպուած է «Հանդէս Ամսօրեայ»ում, 1927, էջ 713—722:
2. Les citations patristiques grecques du «Sceau de la Foi». Մա մի ընդարձակ ուսումնասիրութիւն է հանդ. Կարապետ եպ. Տէր Մկրտչեանի «Կնիք Հաւատոյ» հաւաքածոյի վրայ (էջմիածին 1914, Յառաջարան եւ 436 էջ): Տ. Լըբօն քննում է այս առթիւ այս հարցի վրայ գրուած բոլոր այլ հրատարակութիւնները, զնահատում է հայ եպիսկոպոսի աշխատութիւնը: Տպուած է՝ Revue d'histoire ecclésiastique, 1929, t. XXV, էջ 1—32:
3. Notice sur un manuscrit arménien de la Bibliothèque de l'Université de Louvain. Համարարանն այս մի միակ Հայերէն ձեռագիրն ունի, որ Շարական է, թուղթ, 325 թերթից բաղկացած, բոլորգիր, ԺԷ. դարից: Ընդօրինակողն իր մասին գրում է. «սկսեալս իմ դու հան յաւարտ» եւ ապա «զտէր Մարգարոյ գծողս յիշել ի տէր աղաչեմ գձեզ»: Տ. Լըբօն այս գըրչագիրը համեմատում է էջմիածնի մի Շարականի եւ Վիեննայի 202 թիւի հետ, ըստ Տաշեան Յուլիանի (էջ 523—525):

Տպուած է Le Muséon, t. XVI, 1928, էջ 261—280:

4. Fragments arméniens du Commentaire sur l'«Épître aux Hébreux» de Saint Cyrille d'Alexandrie. Այս գրուածքի հայերէն հին թարգմանութեան վերնագիրն է՝ «Յրանելոյն Կիւրղի Աղեքսանդրացւոյ՝ ի Մեկնութենէ Առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն յԱռաջին ճառէն ի բանն՝ Բաղում մասամբք եւ բազում աւրինակաւ(ք) կանխաւ խօսեցաւ»: Տ. Լըբոն տալիս է այս հայերէն օրինակի լատիներէն հարադատ թարգմանութիւնը, համեմատում է յունարէն բնագրի հետ եւ մեկնարանում: Տպուած է՝ Le Muséon, 1931, t. XLIV, էջ 69—114: Իսկ շարունակութիւնը կամ աւելի ձիւղը՝ այս նիւթի վրայ իբրեւ լրացում երկրորդ յօդուածը լոյս տեսաւ նոյն Le Muséon-ի XLVI հատորում:

Ձեռն տարակուսում, որ յարգելի նախագահն եւ պրոֆէսորն անդամդազ պիտի շարունակէ իր հայագիտական ուսումնասիրութիւնը: Տ. Լըբոն հայերէն սովորած է առանց դասատուի օգնութեան:

Աւելի հիմնաւոր ուսում է առած հայերէնում, միւս հայագէտը՝ Տ. Մէօյլէրմանս, որ 2 տարի յաճախած է Պարիս, Ecole des Langues vivantes Orientales եւ աշակերտած է Պրոֆ. Ֆր. Մակլէրին: Նա մինչեւ հիմայ շատ կարեւոր եւ լուրջ աշխատութիւններ լոյս է բնծայած, որոնց ամբողջական Յուլիոս ներկայացնում եմ ստորեւ:

1. La Domination arabe en Arménie, տպ. Պարիս 1927, 8°, էջ 180: Այս աշխատութիւնը Վարդանի (ԺԳ. դար) Պատմութեան թարգմանութիւնն է, բազմաթիւ հմտալից ծանօթութիւններով: Հեղինակն այս գրուածքը ներկայացրել է Ecole pratique des Hautes Etudes-ի դիպլոմն ստանալու համար:

2. A travers la tradition manuscrite d'Evagre le Pontique, որ տպուած է իբրեւ երրորդ հատոր Le Muséon-ի Մատենագրանի, Լուվէնում 1932:

Տ. Մէօյլէրմանս առանձնապէս գրադուած է եւ շարունակում է գրագրուի այն հին յունական գրուածքներով, որոնց բնագիրը պահպանուել է միայն հայերէն թարգմանութիւնների մէջ: Նա խորապէս ուսումնասիրել է այս հարցը, աչքի առջեւ ունենալով Հ. Բ. Սարգսեանի հրատարակութիւնը՝ «Արքայ չօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենա-

դրութիւնք», Վենետիկ 1907: Այս խնդրին վերաբերող հետազոտութիւններ են նաեւ՝

3. La teneur du Tracticus d'Evagre le Pontique, տպ. Le Muséon, 1929, t. XLII, էջ 74—89:

4. Evagriana, նոյնտեղ, XLIV, 1930, էջ 37—68 եւ 369—383:

5. Le discours de Xystos dans la Version arménienne d'Evagrius le Pontique, տպ. Revue des Etudes Arméniennes, Paris 1929, t. IX, էջ 183—201:

6. Une recension arménienne du syntagma doctrinae. «Հանդէս Ամսօրեայ»ում, 1927, էջ 687—700:

Revue des Etudes Arméniennes du 1930, t. X-ի մէջ (էջ 193—200) Տ. Մէօյլէրմանս դետեղել է մի շահեկան յօդուած:

7. Le Parisinus, supplément grec 419 de la Bibliothèque Nationale de Paris վերնագրով: Այս դրձադրի 65—73 եւ 140—230 թերթիկները հայերէն են, մասամբ Փրանսերէնի թարգմանուած: Հեղինակը, Մէօյլէրմանս ուղղում է այս թարգմանութիւնն եւ երեւան է հանում, որ դրանց առաջին մասը Սամուէլ Անեցու պատմութիւնից է քաղուած, իսկ միւս կտորը, Գր. Լուսաւորչի Յաճախապատումից: Բաց ի դարձ. թարգմանութեան սխալները սրբագրելուց, Մէօյլէրմանս մեկնարանում է նաեւ հայերէն բնագրիները:

Բաց ի վերոյիշեալ Թ. 5 գրուածից համակրելի հայագէտը «Հանդէս Ամսօրեայ»ում հրատարակել է ուրիշ կարեւոր եւ շահեկան հետազոտութիւններ՝ ինչպէս են

8. Note sur «Վանական վարդապետին ասացեալ բան հաւատալի ազգիս մերում», 1925, էջ 462—469:

9. Un procédé hagiographique, 1926, էջ 24:

10. Le dernier prince Mamikonien de Bagrévand, 1926, էջ 168—169:

11. Un fragment arménien de l'Oraison funèbre de Basile de Césarée par Grégoire de Nazianze, 1927, էջ 13—16:

12. Le Costume liturgique arménien. Etudes historiques, տպ. Le Muséon, Louvain, t. XXXIX, 1926, էջ 253—324:

Սա մի ընդարձակ ուսումնասիրութիւն է հայկական պատարագի զգեստի՝ հիմնուած Հ. Վարդան Վ. Հացունու «Պատմութիւն հին հայ տարագի» շահեկան երկասիրութեան վրայ (պատկերազարդ, Վենետիկ 1923):

Գրուածքը վերջանում է եկեղեցական պաշտօնի յատուկ հայերէն բառերի ցանկով: Տ. Մէօյլէրմանս կցել է իր այս լուրջ աշխատութեան՝ օրինակներ հայկական կրօնական պատկերների, որոնք դանում են այլեւայլ տեղեր, ինչպէս Վենետիկ, Լէյքէն, Կ.Պոլիս եւ այլն:

13. Mechitar de Sébaste et les Mechitaristes, տպ. Լուվէն, Le Muséon, t. XLIII, 1930, էջ 117—132:

Այս գեղեցիկ աշխատութեան մէջ, հեղինակը պատմում է ամփոփ կերպով եւ ջերմազին եռանդով, Միխիթար Սեբաստացու կեանքն եւ Միխիթարեան Միարանութեան գործունէութիւնը, հիմնուելով Հ. Վահան Ինդլիգանի հրատարակած զերմաներէն լեզուով Միխիթար Աբրայի կեանքը (Der Diener Gottes Mechithar von Sebaste, Stifter der Mechitharisten und Kulturapostel des armenischen Volkes... , Վիեննա 1929, պատկերազարդ, էջ XII + 178): Տ. Մէօյլէրմանս ուրիշ աղբիւրներ եւս նկատի է առել, ինչպէս՝ Eugène Boré, Le couvent de Saint Lazare à Venise, Paris 1837; Victor Langlois, Notice sur le couvent arménien de Saint Lazare de Venise, 1921; Pro orfani Armeni, Վենետիկ 1925, ինչպէս նաեւ Հ. Ն. Ա. Կիրնեանի եւ նոյն Դիւ. Հ. Ինդլիգեանի ուրիշ գործերը միեւնոյն հարցի մասին: Հեղինակն այսպէս է վերջացնում. «Վենետիկի եւ Վիեննայի Միխիթարեանները շնորհաբար իրենց ազգային մշակոյթի զարգացման ազդու ապէս սատարելուց: Իրենց բազմահմուտ հետազոտութիւններովն եւ իրենց գրական երկասիրութիւններովը ինչպէս Վենետիկիցիք, նոյնպէս եւ Վիեննացիք, իրենց համբաւաւոր հիմնադրի արժանաւոր աշակերտներն են հանդիսացել»:

Տեսնենք այժմ թէ ինչ հին հայկական ձեռագիրներ կան Բելգիայում:

Բելգիայի մատենագրարանները շատ աղքատ են հայ գրչագիրների կողմից: Նրանց ամենամեծի, այն է Բրեւքէլի Աբրայայի Մատենագրանի (Bibliothèque Royale) ձեռագիրների բաժնում ընդ ամէնը երկու հայերէն ձեռագիր միայն կայ, բայց այս երկուքն էլ որոշ տեսակէտից շահեկան են:

Առաջինն է՝ մի խոշոր մեծագիրը (in folio) Բառարան 3 հատորից բաղկացած կաշեկազմ, հայերէնից լատիներէն, բայց երբեմն պատահում են նաեւ հայերէն բացատրութիւններ եւ

զաղղիերէն: Տառերի ձեւը բոլորգիւր է: Այս տարօրինակ բառարանը բովանդակում է ոչ միայն հայերէն գրաբար եւ ուսմական բառեր, թէեւ ոչ ամբողջական, կիսատ, այլ եւ ամէն տեսակ հին ու նոր, գրական եւ ժողովրդական օտար բառեր, որոնք այս կամ այն ձեւով եւ հնչումով մտել են գործածութեան մէջ: Բառերի առջեւը գրուած են — ոչ բոլորի, նրանց նշանակութիւնը լատիներէն: Յոտար բառերի առջեւ՝ նրանց հայերէնը: Բոլոր օտար եւ ուսմական բառերը գրուած են այն ձեւով, ինչպէս որ հնչում են ժողովրդեան բերանում: Յիշեմ մի քանիսը այդպիսի բառերից:

Լամբ. — երկան հաստ փատ, որ համալները կ'ունենան:

Լայանալ — ուսանիլ, սորվել:

Լալա — tulippe.

Լսկա — գայթակղութիւն, առակ ԻԲ:

Լամաթայ — մունչպոյէ, զարթուցիչ:

Քրօր, քրօրէ — cherubin.

Օղուլուշաղ — familia.

Սակայկանութիւն — (ազգականութիւն):

Նիւր, շրի — կաթն, պարսկերէն:

Ա. հատորն ունի 437 թերթիկ (feuillet) .

առաջին բառն է՝

արբայ — abbas, abbé.

Վերջին բառն է՝

Լարան — «Laban».

Բ. հատորն ունի 535 թերթիկ. առաջին բառն է՝

չամբ, չամբի (սեռական) — առանց բացատրութեան):

Վերջին բառն է՝

Իբիմ — չրթուն:

Գ. հատորն ունի 436 թերթիկ: Առաջին բառն է՝

չամբչեայ — Lymphaticus.

Վերջին բառն է՝

Օքտել — օգտել, բաւել, բաւականել:

Ոչ մի տեղ յիշատակութիւն չկայ, թէ ո՞վ է նրա հեղինակն եւ ե՞րբ կամ ո՞ր է գրուած: Ա. հատորի սկիզբը կայ միայն հետեւեալ տարօրինակ զաղղիերէն մակագրութիւնը. տարօրինակ՝ իր ուղղագրութեամբն եւ աւելի տարօրինակ՝ իր ստորագրութեամբը. «Le présent diquetionnaire (dictionnaire) a tête (a été) trôve (trouvé) chez un bokiniste (bouquiniste) de la rue St. Severin—St. Jacques». Ստորա-

գրուած է — Thonderterthroukh. Armenian de Erzeroum: Առեղծուած է այդ «էրզրուեցի հայի» անունը:

Արդեօք սա այն հայ-լատին բառարանը չէ՞, որ յօրինել է Ամստերդամի հայ եկեղեցու հովիւ Ամստերդամի Տէր Յովհաննէսը, որ Ամստերդամ է եկել 1733ին, մասնակի վերանորոգել է սոյն եկեղեցին 1749ին եւ յիշուած է իբրեւ «հայ-լատին բառարանի հեղինակ»¹:

Երկրորդ գրչագիրն է՝ Հայ-Թրքական Աւետարան, 4 աւետարաններն ամբողջութեամբ, որ վերջանում է հետեւեալ յիշատարանով. «Աւարտուն գրքիս ՌճԿԹ, մարտի յամսոյ Ժ. եւ Ա. ի վայելուն Արզրմանին. ընդ երկայն առուրս պահեսցէ, ձեռամբ Նախա Տէր Խաչատուրի. ի ժամանակս Կարապետ արհեստիւնոսի Զէթունցի. էջմիածնա կաթողիկոս Աստուածատուրի»²: Ըստ այսմ նա գրուած է 1720ին:

Գրչագրի սկզբունքն էլ կայ մի ուրիշ յիշատակութիւն, որ հաւանականաբար վերոյգրեալ «Արզրմանի» կողմից է, եւ որ ստուծ է՝ «յիշատակ է արարելիցի տէր Սարգիս քահանայի»:

Այս Աւետարանը շքեղ կազմ ունի կաշիէ, որի երկու կողքի վրայ փայլում է Օսմանեան Թուղրան. ինչո՞ւ համար, յայտնի չէ: Բրիւքսէլի Մատենադարանն այս գրչագիրը ձեռք է բերել ընդ ամէնը 52 Փր. 80 ս. վճարելով:

Գրչագիրը շատ մաքուր է գրուած, նոտրագիր, թղթի վրայ, եւ ամէն էջ ունի հայկական զարդագրեր: Ինչպէս երեւում է, «Նախա» (գծագրող) Տէր Խաչատուրը հմուտ էր իր արուեստին:

Ամէն մի էջի կէսը հայերէն-գրարար Աւետարան է, իսկ միւս կէսը նրա քրքիւր թարգմանութիւնը, հայերէն տառերով: Ես համեմատեցի մի քանի էջ այդ քարգմանութիւնը հայերէն բնագրի հետ: Ոճը Կ. Պոլսի սովորական գրական լեզուն է, պարսկերէն եւ արաբերէն բառերով լիք, ինչպէս որ էր մինչեւ նորագոյն Քէմալեան շրջանը. բայց պատահում են նաեւ ուսմականութիւններ: Ընդհանրապէս թարգմանութիւնը կատարուած է հարգատ, նոյն իսկ բառացի: Համեմատութիւնը հայերէն բնագրի եւ թրքերէնի մէջ ցոյց տուաւ, որ կայ նաեւ տարբերութիւններ:

Այսպէս՝ Յովհաննէս Աւետարանի մէջ՝ «պատասխանի ետուն նմա հրէայքն՝ մեք օրէնս ունիմք» թարգմանուած է. «ՃՓուտէր ճէվալ վէրտիլէր օնա. պիղիմ նաւուսըմըզ վարտըր»: «Նամուս» նշանակում է պատիւ եւ ոչ թէ օրէնք: «Գլուխ Առաջին» թարգմանուած է «Պաշ խպարտա»: «Իբարդա» (اخبار) նշանակում է սկիզբ եւ ոչ թէ առաջին, որի համապատասխան բառն է Բիրինջի (پیشگی) տաճկերէն կամ արաբերէն ج (էվ-վէլ) եւայլն: Կան նաեւ տեղեր, ուր թրքերէնն աւելի անթերի է քան հայերէնը: Օր. համ. Յիսուսի խօսքերն ըստ Մատթէոսի՝ «ամենայն ինչ տուաւ ինձ ի հօրէ իմմէ» պարբերութեան «ինձը» հայերէնում բաց է թողուած, ուր որ թրքերէնում ամբողջ է. «ճէմի նէսնէլէր փէտէրըմտէն պաւա վէրիւտի»: Հայերէնի մէջ «Ահա այդք ցձեղ» պարբերութիւնը, ը-ի անկումով դարձել է «ահա այդ ցձեղ», բայց թրքերէնում ճիշդ է գրուած:

Այս եւ այսպիսի մի քանի տեղիք ցոյց են ապրիս, որ թրքերէն մասը ոչ թէ այս հայերէն բնագրից է թարգմանուած, այլ հայերէնի դիմացը գրուած են ուրիշ պատրաստի թրքերէն Աւետարանից օրինակուելով: Այս հայ-թրքական Աւետարանն անշուշտ թրքախօս հայերի գործածութեան համար էր:

Բրիւքսէլի Արքայական Մատենադարանում կայ նաեւ մի հետաքրքրական Աւետարան, 4 աւետարանիչներն ամբողջութեամբ, պարսկերէն լեզուով, սովորական արաբական տառերով գրչագիր եւ շատ մաքուր գրուած: Արտագրողն, ինչպէս եւ սկզբնական թարգմանողն ըստ ամենայն հաւանականութեան, հայեր են եղած, յատկապէս պարսկահայեր: Կողքի առաջին սպիտակ երեսի վրայ հայերէն արձանագրութիւնն ասում է. «Մարկար տի Խոսրովըս գրեցի ի թիվին 17 72, Անգալի»: Անգալին պարսկական նաւահանգիստ է Կասպից ծովում. իսկ տի Խոսրով = Խոսրովեան ձեւը յատուկ էր այն պարսկահայերին, որոնք հաստատուած էին Ամստերդամում, ինչպէս բազմաթիւ ուրիշ օրինակներից յայտնի է:

Այս պարսկերէն գրչագրի էջերի վրայ, այլևայլ տեղեր ուրիշ շատ ծանօթագրութիւններ կան հայերէն լեզուով: Կարեւոր է հետեւեալը: Մատթէոսի աւետարանի մի էջի վրայ պարսկերէն 8 տող ջնջուած է եւ ապա նրա տակը 2 նոր տող աւելցուած դարձեալ պարսկերէն. լուսանցքի վրայ հայ գրիչն այդ-

տեղ աւելացնում է հայերէն՝ «մինչեւ ցայս վայր նոր գրածս է աւելորդ» եւ ապա «այս մին տողս է ճիշդ»: Այս «մին» բառը ի մէջ այլոց, ցոյց է տալիս, որ գրողը պարսկահայ է, որովհետեւ այնտեղի ոճ է: Էջերի տակն ու վրան յիշուած է հայերէն թէ քաներօրդ զլուին է եւ քանի տուն է գրուած եւ գրքի վերջում գումարուած է. «Միանգամայն տունք չորից ավետարանացն են 3779. ինին բովանդակ զլուիք չորից ավետարանաց 89»:

Մատթէոսի Աւետարանի թարգմանութեան վերջը հայ գրիչը նշանակել է «1071 տունք»: Այս 1071ը՝ մեծ չիօթութեան պատճառ է դարձել գրչագրի հին եւ նոր տէրերին: Ոմն Դոկոս. Հէնդէրսըն, որ Միսինէր է Պարսկաստանում, գնել է այս Աւետարանը 1854ին եւ տեանելով վերեւ նշանակուած «1071»ը, առանց ուշադրութիւն դարձնելու հայերէն «տունք» բառին, ենթադրել է թէ դա քրիստոնէական թուական է եւ լրջօրէն արձանագրել է գրչագրի վրայ. «See the date at the end of St. Matt^{nes} Gospel, corresponding to the date of the christian Era 1071» (Թուականը տես Մատթէոսի Աւետարանի վերջը, որ համապատասխանում է քրիստոնէական 1071ին): Ոչ պակաս սխալ է գործել Արքայական Մատենադարանը, տպագրելով իր Յուցակի մէջ «Cette date de 1071 désigne sans doute l'ère arménienne et par conséquent c'est en 1622 de notre ère que le volume fut écrit»³.

Պարսկերէն թարգմանութեան մէջ ամէն մի Աւետարանչի տակը գրուած է նրա գրութեան թուականը արաբական ձեւով: Ամէնից սրորը Ղուկասի աւետարանի ներքեւ նշանակուածն է: Այս պարբերութիւնից պարզ երեւում է, որ գրուած է Հիջրէյի 1074ին, եւ «օրհնեալ Զիկաղէ ամսի 6ին» (11րդ ամիսը Մուհարրէմից սկսելով) ինչպէս ասում է պարսկերէնում: Ուրեմն ոչ քրիստոնէական եւ ոչ հայկական թուականին այլ Հիջրէյի 1074ին, որ է 1662, Յունիս 24:

Շահեկան է նմանապէս Մարկոսի Աւետարանի ներքեւ գրուած արձանագրութիւնը: Այստեղ ասում է, որ գրուած է «Էմիթ Միլիթի որդի Սէրգիսի ձեռքով». եւ ապա

³ Catalogue des manuscrits de la Bibliothèque Royale de Belgique, II, 55, no. 54. Մատենադարանին ուղղած իմ դիտողութիւնից յետոյ հարկ եղած ուղղումը կատարուած է այնտեղ:

աւելցուած է նոյն տարին եւ ամիսը ۱۰۷۴ صبارك زی قمدو, այսինքն նոյն «օրհնեալ» Զիկաղէ ամիսը 1074ին:

Հայ գրիչը աւելորդ չէ համարել Մատթէոսի Աւետարանի զլուին էլ զնել խաւածական ձեւով սովորական սկզբնական օրհնէնքը՝ այսպէս՝ Բիսմիլլահ էրրահման էրրահիմ, «Յանուն Աստուծոյ գթածի եւ ողորմածի»:

Մի հայերէն գրչագիր էլ կայ Լուվէնի համալսարանի Մատենադարանում, Շարական, որի մասին վերեւ խօսեցայ:

ԺԲ. ԳԼՈՒԽ

Բելգիայի համալսարանների կազմը: Բրիւքսէլի համալսարանին կից «Արեւելեան կախար» (Institut de Philologie et d'Histoire Orientales): Հայերէնի ամբիոնը: Պրոֆ. Ն. Աղոնց: Կախարի բացումն եւ գործունէութիւնը: Փոլս-Նախագահ Պրոֆ. Հ. Գրէգուաի հառն եւ անցեալ ու ներկայ գործունէութիւնն ի նպաստ Հայոց: Բրիւքսէլի Նուպարեան Հիմնարկու Քիւնը. Բրա պայմանները, դրամագրութիւն եւ քոչակաւորները:

Փոքրիկ Բելգեան 4 համալսարան, ունի բոլոր իրենց մասնաձեւերովը: Այս համալսարանների երկուքը ամբողջապէս պետական են, այսինքն գտնուում են տէրութեան անմիջական կարգադրութեան տակ եւ պահպանում են պետական բիւջէից սահմանուած ծախքով: Այսպիսի համալսարաններից մէկը բացուած է Ֆլանդրայի, այսինքն Փլամանների բնակավայրի կենդրոնում, Գան կամ Գէնտ (Gand, Gent) քաղաքում, իսկ միւսը՝ վալոնների գլխաւոր քաղաքում, Լիէժում: Տարբեր է երկու այլ համալսարանների թէ վարչական դիրքն եւ թէ տնտեսական կացութիւնը: Սրանցից՝ Լուվէնի (Louvain, որ նոյնպէս Ֆլանդրայում է) համալսարանը գերազանցապէս կաթոլիկական ուղղութիւն ունի եւ այդ պատճառով էլ կոչուում է պաշտօնապէս՝ «կաթոլիկական համալսարան» (Université catholique de Louvain): Այս բարձրագոյն կրթարանը գրուած է Բելգիայի կախարայանների հովանաւորութեան տակ եւ վայելում է նրանց մասնաւոր հոգածութիւնը: Վերատեսուէն էլ կախարայոս է: Այս հիման վրայ նա կրում է միանգամայն «կաթոլիկոսների

¹ Տես իմ «Հուլանդան եւ Հայերը», Վիեննա, 1926, էջ 59, 199 եւ շար.:
² Աստուածատուր Ա., Համագանցի, կաթողիկոս ընտր. 1715 Մայիս 7, վախճ. 1725 Հուլիս. 10:

Համալսարան» (Université des évêques) տիրու-
ղորդ: Կառավարութիւնը այս Համալսարանի
ծախքերի մի թեթեւ մասն է միայն հոգում:
մեծ մասը հոգացւում է այն դանձանակի ար-
դիւնքից որ դրուած է եկեղեցիներում «յո-
զուտ կաթողիկոսական Համալսարանի»: Այս
Համալսարանում հիմնաւոր կերպով աւան-
դուած է կրօնագիտութիւնը, բայց միեւնոյն
ժամանակ բոլոր միւս սովորական ճիւղերն էլ
իրենց պատշաճաւոր տեղն ունին: Իբրեւ Հա-
կաղիւտ Լուվէնին՝ հիմնուած է Բրիւքսէլում
«Ազատ» կոչուած Համալսարանը (Université
Libre de Bruxelles): Սա եւս Կառավարու-
թեան անմիջական տնօրինութեան տակ չէ եւ
երկար ժամանակ, մանաւանդ սկիզբները, իր
ծախքերը հոգում էր գլխաւորաբար Բրիւք-
սէլի քաղաքի եւ մասնաւոր անհատների ըն-
ձեռած միջոցներով: Բայց վերջերս Կառա-
վարութիւնը տարեկան որոշ գումար (10 մի-
լիոն ֆրանք) յատկացնելով, ծածկում է
ծախքերի մեծ մասը: Աւելորդ է ասել, որ
բոլոր 4 Համալսարաններում էլ ուսանողների
մեծ մասը տարեկան որոշ թոշակ են վճա-
րում: Կան բացառութիւններ չքաւորների
համար: Գասախօսութիւնների լեզուն՝ Գանի
Համալսարանում, իբրեւ զուտ Ծլւմանական,
Ծլւմերէն է, իսկ միւսներում գաղղիերէն:

Շահեկան է այս Համալսարաններում ու-
սանողների թիւը: Պաշտօնական տեղեկու-
թիւնների համաձայն, զուտ Ծլւմանական
Համալսարանը, 1931/32ին յաճախել են 1690
աշակերտ: Իսկ միւս Համալսարաններում, նոյն
չրջանում, ուսանողների թիւն է եղել՝ Լիէ-
ժում 2469, Բրիւքսէլում 2242, իսկ Լուվէ-
նում 3963¹: Սրանք միայն տեղացիք, Բել-
գիացիք են: Բայց կան բազմաթիւ օտարեր-
կրացի ուսանողներ, որոնց թիւն այն տարին
2423 էր եւ շարունակում է աճել:

Բելգիան ունի նաեւ իր ակադէմիաները:
Եւ որովհետեւ, երկրում երկու ցեղ եւ երկու
պաշտօնական լեզու գոյութիւն ունի, ուստի
ակադէմիաներն էլ երկու են, մէկը Բրիւքսէ-
լում գաղղիերէնի համար, որ կոչուած է
Académie Royale de la langue et de litté-
rature française եւ միւսը Գէնտում, Konink-
lijke Vlaamsche Academie voor Taal en Let-
terkunde անունով: Այս երկրորդի նպա-
տակն էլ Փլւման, կամ որ գրեթէ նոյնն է՝

¹ Annuaire statistique de la Belgique, t. LIV, Bruxelles 1932.

հոլլանտական լեզուի, բանասիրութեան եւ
գրականութեան մշակումն է:

Կան նաեւ ուրիշ բարձրագոյն զուտ մաս-
նադասարաններ, որոնց վրայ աւելորդ
եմ համարում խօսելն այստեղ, բացի մէկից,
որ իմ գրութեան գլխաւոր առարկան է: Այս
նոր դիտական Հաստատութիւնը, Բրիւքսէլի
«Արեւելեան Բանասիրութեան եւ Պատմու-
թեան Կանաւն» (Institut de Philologie եւ
d'Histoire Orientales), որ ծնունդ է աւած
1931ին հետեւեալ պարագաներում:

Երբ 1930ին Բելգիայի քաղաքական ան-
ջատ գոյութեան հարիւրամեակն էր տօնում
եւ այս առթիւ մեծ հանդէսներ էին կատար-
ւում, Անվէրսում բնակող մի հարուստ նա-
ւասէր, Ռորէրս Վէնէր անունով, կամեցաւ
չօջափելի կերպով յաւերժացնել այս տօնն իր
կողմից եւս եւ Բրիւքսէլի Համալսարանին
տարեկան 175.000 ֆրանքի մի գումար խոս-
տացաւ, այն պայմանով, որ այս նուէրով
հիմնուի Արեւելագիտութեան ուսմամբ պա-
րաստող մի նոր կրթական Հաստատութիւն:
Նրա այս դիտաւորութիւնն եւ նուէրը մեծ
չնորհակալութեամբ ընդունուեց Համալսա-
րանի կողմից: Երբ պատշաճաւոր վաւերա-
գիրները պիտի փոխանակուէին, Համալսա-
րանի «Փիլիսոփայութեան եւ Գրականութեան
ճիւղի» (Faculté de Philosophie et de Lettres)
նախագահը, Պրոֆ. Հանրի Գրէգուառ, որ
միշտ բարեկամ է եղած Հայութեան, դիմեց
բարերարին եւ խնդրեց, որ իր նուիրատու-
թեան մի մասը յատկացնէ «Հայկական ամ-
բիոնին» եւ իր գրաւոր առաջարկութեան մէջ
էլ այս կէտը իր կողմից յառաջ բերէ, որպէս
զի որ եւ է առարկութեան առիթ չարուի:
Պ. Վէնէր ընդունեց Պ. Գրէգուառի խըն-
դիրքն եւ Համալսարանի Խորհուրդին ուղ-
ղած պաշտօնական գրութեան մէջ, որով
յայտնում էր իր նուիրատուութիւնը, պայ-
մաններից մէկն էլ այն դրեց, որ տարեկան
20.000 ֆրանք յատկացուի սպազայ Արեւե-
լեան Կաճառում հայերէնի դասախօսութեան:
Բրիւքսէլի Համալսարանի Վարչական Խոր-
հուրդն իր 1930 Նոյեմբեր 29ի նիստում ըն-
դունեց Պ. Վէնէրի նուիրատուութիւնն իր
բոլոր պայմաններով: Այս կերպով Հայագի-
տութիւնը պարտաւորիչ էր դառնում իբրեւ
գասնթացը: Բայց որովհետեւ տարեկան
20.000 ֆրանքը բաւական չէր մշտական ու-
սուցչապետ հրաւիրելու համար, այնպիսի
գասախօս, որ իր ուսումնական դիրքովը հա-

ւասար նկատուէր Համալսարանի միւս պրո-
ֆէսորներին, ուստի Վարչական Խորհուրդը
որոշեց, որ Հայագիտութեան ամբիոն բա-
ցուի այն ժամանակ երբ Հայ Հասարակու-
թիւնն էլ մօտաւորապէս այդպիսի մի գու-
մար իր կողմից իբրեւ տարեկան նպաստ կը
յատկացնէ: Բելգիայի Հայ դաւութը խու-
չմնաց այս առաջարկութեան եւ լրացրեց հարկ
եղած գումարը: Այս մասին Արեւելեան
Կաճառի պաշտօնական հրատարակութիւնը՝
«Տարեգիրք» մեծ համակրանքով է խօսում եւ
Հայերի այս ջանքը կոչում է «Effort accompli
par un groupe de patriotes arméniens, ayant
à leur tête la comtesse d'Arschot (Պոդոս Նու-
պար փաշայի դուստրը), M. M. Saroukhan
et Mihrtadiantz»²:

Նոյն տարին իսկ, այն է 1931 Նոյեմբեր
24ին տեղի ունեցաւ նորահաստատ Արեւելեան
Կաճառի պաշտօնական բացման հանդէսը,
հրաւիրեալների մեծ բազմութեան ներկայու-
թեամբ, որոնց մէջ բազմաթիւ Հայեր: Բաց-
ման ճառը արտասանեց Համալսարանի վե-
րատեսուչը, որ պարտականութիւն համարեց
չնորհակալութիւն յայտնել «այն Հայերին,
որոնք իրենց դրամական օժանդակութեամբը
հնարաւոր կացուցին Հայերէնի ամբիոնի հաս-
տատուելը»: Բայց բուն խօսքը պատկանում
էր Պրոֆ. Գրէգուառին, որ «Արեւելեան Կա-
ճառի» փոխ-նախագահ էր ընտրուած եւ
խիսկական ղեկավարն էր հանդիսանում: Խօ-
սելով Հայկական ամբիոնի մասին նա ներ-
կայացրեց Պրոֆ. Նիկողայոս Ազունցին, որ
հրաւիրուած էր ուսուցչապետ այս ամբիոնի
եւ զովեց նրա նախկին դիտական գործու-
նէութիւնն իբրեւ Պետրոգրադի Համալսա-
րանի Հայերէնի ուսուցչապետ: Հայագիտու-
թեան ուսման ակնարկելով նա ասաց. «Ուս-
թիւն է Բիւզանդականին, այլ այնպէս խոս-
նում է սրա հետ, որ կարելի է կոչել «բիւ-
զանդա-հայկական», կամ նոյն իսկ «հայ-բիւ-
զանդական...»: Եւ այդպէս այս առթից օգ-
տուելով յարգելի ճառախօսն, որ միշտ հե-
տաքրքրուած է Հայկական հարցով եւ ուժ-
գնորէն պաշտպանած³, աւելացրեց հետե-
ւեալը. «Կարո՞ղ եմ առանց յուզման ներկայ
լինել մեր մայրաքաղաքում Հայերէն լեզուի,
գրականութեան եւ պատմութեան դասըն-
թացքի հաստատման եւ չլիշել Պատմութեան
ամենադաժան ազգային ողբերգութիւններից
մին: Հայ մշակոյթի այս իրաւական (de jure)
ճանաչումն եւ ընդունումն եմ իբրեւ սկիզբ
հատուցումի (reparation), իբրեւ քաջալերա-
կան եւ իբրեւ լուսագոյն ապագայի ակնկա-
լութիւն»:

² Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire Orientales pour 1932/1933, Bruxelles, p. 17.

³ Ուսուցչութեան արժանի է Պ. Գրէգուառի վա-
րած Le Flambeau, revue belge des questions politi-
ques et littéraires ամսագիրն, որ յաճախ երևցած
էն շահեկան յոդուածներ Հայկական կեանքի երևոյթ-
ների մասին:

Սյու առաջին տարեշրջանում (1932/33)
Պրոֆ. Ազունց իր աշակերտներին, որոնք մե-
ծամասնութեամբ օտարագիրք են, բացառեց
Հայերէն այրուբէնից յետոյ ուղղակի քերա-
կանութիւն, հիմնուելով Meilletի ծանօթ
ձեռնարկի վրայ: (Աւելորդ է կարծեմ ասելն
որ դասախօսութիւնը գաղղիերէն է:) Ապա
նա պարսպուեց Հայերէն բնագիրների ըն-
թերցումովն եւ մեկնութիւնովը, ինչպէս Աւե-
տարան, Եղնիկ եւ Փաւստոս Բիւզանդացի:
Այս աշակերտների թիւումն է նաեւ նոյն ինք
Պրոֆ. Գրէգուառ:

Համալսարանն, որի, ինչպէս արդէն ասի,
Փիլիսոփայութեան եւ Գրականութեան ճիւ-
ղին կից է Արեւելեան Կաճառը, սկսած է ար-
դէն իր Հայագիտական մատենադարանն եւս
կազմել, որի համար գրքեր մասամբ գնուած
են եւ մասամբ նուէր ստացուած:

Արեւելեան Կաճառը նաեւ շահեկան հրա-
պարակական գասախօսութիւններ է սարքում
յատկապէս հրաւիրուած օտար գիտնական-
ների միջոցով: Այսպիսի մի գասախօսութիւն
կարգաց Օր. Ս. Տէր Ներսէսեան Ուէլլիի
Գոյրցի (Welsley College, Cambridge, Mass.)
ուսուցչապետը, l'illustration de la légende
de Barlaam et Joasaph նիւթի վրայ: Նրա
գասախօսութիւնը արժանացաւ մասնագէտ-
ների, ի մէջ այլոց Հ. Պետերսի գնահատու-
թեան⁴:

Բրիւքսէլում կայ նմանապէս՝ մի շատ
կարեւոր Հայկական բարենպաստակ հաստա-
տութիւն, այն է՝ Նուպարեան հիմնարկու-
թիւնը, որ պաշտօնապէս կոչուած է Oeuvre
des Boursiers Arméniens Fondation Boghos
Nubar pacha, որ հանդուցեալ մեծ Հայի ազ-
գասիրական ձեռնարկութիւններից մէկն է եւ
ոչ նուազագոյնը:

⁴ Հ. Պետերս գրել էր արդէն այս նիւթի վրայ.
P. Peeters, La traduction latine de «Barlaam et
Joasaph» et son Original grec. Analecta Bollandiana, t. XLIX, 1931, p. 276—312.

Այս հիմնարկութեան նպատակն է, ինչպէս ասուած է Կանոնադրութեան Ա. յօդուածում, «գալրոցական դրամական նպաստներով օգնել այն հայ պատանիներին, որոնք ուսման ընդունակ են բայց միջոց չունին համալսարան եւ բարձրագոյն գալրոց մասնակցութեան սովորելու, մեր ազգին օգտակար հանդիսանալու համար»: Բայց այս նպատակները պէտք է յատկացուին այն ուսանողներին, «որոնք իրենց ուսումնաւարտելուց վերջը յանձն կ'առնեն Հայաստան երթալ: Նրանք պարտաւոր են Հայկական Կառավարութեան գալրոցներում դասախօսել կամ աստիճանաբար իրենց մասնագիտութիւնը Հայաստանում գործադրել»:

Նուպարեան հիմնարկութեան թոշակաւորները, ինչպէս որոշակի շեշտուած է Կանոնադրութեան 5րդ յօդուածում, պէտք է հայցելին պատկանին, բայց առանց խտրութիւն զնելու նրանց կրօնական դաւանութեանը մէջ: Թեկնածուները պէտք է համապատասխանեն հետեւեալ պայմաններին (յօդ. 7). ա. հայերէն կարգաւ եւ գրել պէտք է գիտնան. բ. ոչ պակաս քան 14 տարեկան եւ ոչ աւելի քան 20 տարեկան լինին. գ. բարի վարքի վկայական ներկայացնեն Եկեղեցական իշխանութեան կամ այլ պատշաճաւոր մարմնի կողմից տրուած. դ. բժշկական վկայական ունենան իրենց առողջական վիճակի վրայ. ե. ոչ մի քաղաքական կուսակցութեան չպատկանին եւ իրենց ուսման ընթացքի ժամանակ էլ ոչ մի քաղաքական կազմակերպութեան չյարին. զ. այս պայմաններին համապատասխանող աղջիկ ուսանողուհիներ եւս կրնան ընդունուիլ իրրեւ թոշակաւոր. բայց ուսանողուհիների թիւը թոշակաւորների ընդհանուր թուի մէկ հինգերորդից աւելի պէտք է չլինի:

Հիմնադիր բարեգործը հարկ է համարել նշանակել նոյնպէս թէ ինչ մասնագիտութիւն նախատեսած է, որ իր թոշակաւորները հետեւին (յօդ. 12). «Որովհետեւ մեծ թուով հայեր, որոնք իրաւագիտութիւն, բժշկութիւն եւ նոյն իսկ երկրագործութիւն են սովորել, մեծ գթուարութիւն են գգում իրենց արհեստը բանեցնելու եւ ստիպուած են ուրիշ պարագայում փնտռել, իրենց սպորուտը շահելու համար, ուստի թոշակներ պէտք է յատկացուին մասնաւորապէս այն ուսանողներին, որոնք կ'ուզեն դասնալ՝ մեքենավար, ելեկտրագէտ, քիմիաբան, ճարտարագէտ,

ճարտարապետ, դեղագործ, վաճառական եւ մանաւանդ այնպիսիներին, որոնք յանձն կ'առնեն իրենց սովորած մասնագիտութիւնը Հայաստանի գալրոցներում դասախօսելու: Իրրեւ բացառութիւն կարելի է 10 թոշակից 2ը յատկացնել այն ուսանողներին, որոնք ուրիշ ճիւղերի կը հետեւին, օրինակի համար գրականութեան եւ դեղարուեստի»:

Պօղոս Նուպար՝ իր այս հայնպաստ հաստատութիւնը հիմնել է Ֆրիւֆելդում, ուր բնակուած է իր միակ դուստրը, որ ամուսնացած է մի աղետական Բեռլինացու, կոմս դ'Արսխոտի հետ (comte d'Arschot-Schoonhoven): Հաստատութիւնը գրուած է մի վարչական խորհուրդի հսկողութեան տակ, որ բաղկացած է 5 անդամից: Սրանցից 2ը Հայոց Բարեգործական Ընդհանուր Միութեան Կենդրոնական Վարչութեան կողմից պէտք է նշանակուին, 2ը Բրիւքսէլի Համալսարանի Հաստատութեան (Fondation Universitaire) կողմից, իսկ 5երորդը պէտք է լինի Հիմնադիր Նուպարի ուղղակի սերունդը կամ սրա ներկայացուցիչը: Այս վարչական խորհուրդն է, որ լիազօր կերպով վարում է հաստատութեան ելեւմուտքը:

Այս հաստատութիւնը հիմնուած է 1924ին: Սկզբնական գրամագլուխը՝ 20.000 (քսան հազար) անգլիական լիրա ստէրլինգ էր, որ Պօղոս Նուպար դրաւ Լոնդոնի Barklay's Bank Ltd գրամատան մէջ, 5% տոկոսաբեր արժեթղթերով: Նրա պայմանն էր, որ այս գրամագլուխը պիտի մնայ անձեռնմխելի (trust) եւ միայն տոկոսը պիտի գործադրուի: Այնուհետեւ բարերարը իր մահուանից անմիջապէս յառաջ, այն է 1930ին, այդ գրամագլուխի վրայ աւելացրեց 50.000 ամերիկական դոլլար (= մօտ 10.000 £), դարձեալ տոկոսաբեր արժեթղթերով: Եւ որպէս զի այս գրամագլուխը չպակսի, այլ տարուց տարի աճի, Կանոնադրութեան յօդ. 2ի համաձայն, Բարկլէյ բանկը պիտի պահէ ընդհանուր եկամտի ¹/₅ը եւ աւելացնէ գրամագլուխի վրայ, եւ միայն մնացած ⁴/₅ը ուղարկէ Բրիւքսէլի Համալսարանական Հաստատութեան, գործադրուելու համար: Եւ որովհետեւ Պարիզի Հ. Բարեգ. Ընդհ. Միութիւնը որոշ հսկողութիւն պիտի ունենայ, իր 2 ներկայացուցիչները միջոցով, թոշակաւորների վրայ, ուստի Բրիւքսէլի Համալսարանական Հաստատութիւնն էլ, բանկից ստացած գումարի

¹/₁₀ը պէտք է ընէ Բարեգործականի տրամագրութեան տակ, այս վերջինի ընթացիկ ծախքերը ծածկելու համար: Եւ վերջապէս՝ Կանոնադրութիւնը նախատեսել է նաեւ այն պայմաններն, երբ Հ. Բարեգ. Ը. Միութիւնը կամ Բրիւքսէլի Համալսարանական Հաստատութիւնը լուծուին: Այն ժամանակ անգլիական յիշեալ բանկը գրամագլուխի եկամուտը, ըստ Կանոնադրութեան գործադրուելու համար, պիտի յանձնէ Պարիզի Հայ Լուսաւորչական Եկեղեցուց թաղական կամ վարչական խորհուրդի նախագահին, որ Նուպարեան գերդաստանի մի ներկայացուցիչ հետ պիտի շարունակէ գործել:

Տիրող ընդհանուր տնտեսական տագնապն ազգած է նաեւ այս հայնպաստ ձեռնարկութեան արդիւնքի վրայ: Անձեռնմխելի գրամագլուխը, ներկայ պայմանների մէջ, թէ՛ իրրեւ հիմնադրած եւ թէ՛ իրր տարեկան տուկոս՝ զգալի կերպով պակասած է: Աչքի առջեւ ունիմ 30 Սեպտեմբեր 1931 եւ 30 Սեպտեմբեր 1932 հաշուեկշիռները: 1930/31ին տարեկան եկամուտ է եղած (ընդհանուր մուտքի ⁴/₅ը՝ ըստ Կանոնադրութեան) 243.033,80 բելգ. ֆրանք, իսկ 1931/32ին միայն 160.061,50: Ըստ այնմ էլ պակասած է թոշակաւորների թիւն եւ նրանց տրուած նպաստը:

«Պօղոս Նուպար փաշա հիմնարկութիւնը» իր հաստատման թուականից, այն է 1924ից մինչեւ 1932 Սեպտեմբեր 30, ունեցել է 48 թոշակաւոր ուսանող, որոնց վրայ ծախսել է 1,036.000 բելգ. ֆրանք: Այս ծախսն անհասար կերպով է բաժնուած: Նրանց մէջ կայ մէկն, որ երկար տարիներ օգտուել է նպաստից եւ ստացել է 112.000 ֆրանք, բայց սա բացառութիւն է կազմում:

Նուպարեան Հիմնարկութեան այժմեան վարչութիւնը մեծ հոգածութիւն է ցոյց տալիս թէ գրամական խնդրի կանոնաւորութեան եւ թէ թոշակաւորների յարմար ընտրութեան:

(Շարունակելի:)

ՍԱՐՈՒՆԱՆ



Ծ Ա Ն Օ Թ Ը Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ի Բ

ՍՏՆՄՊՈԼՈՅ ՊԵՏՄՈՒԹԵՆ

ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻԻ ՔԵՕՍԻՒՐՃԵԱՆ

(Շարունակութիւն:)

Սելամիէի ընդարձակ լայն պողոտան վարէն մինչեւ անխառնել, եւ տաղ-խամամ ու զիլիխտար-պահիկ կոչուած տեղերը ամբողջ դրաւուած էր հայ երեւելիներու եւ բարեկեցիկ արհեստաւորներու տուներով: Սելամիէի շուկան ամբողջապէս երկուստեք կը փայլէր սիրունակ խանութներով հայ նպարավաճառներու, ձկնավաճառներու, պողպատաւաճառներու, գինեկաւաճառներու եւ վարսավիրայ սփիւղներու, որոնց կարգին ողբացեալ Հայրսալ ունեցաւ իր շատ գեղեցիկ սրճարանը՝ եղական իր տեսակին մէջ, զի անոր պատերուն վրայ Հայրս՝ նկարիչ Պէհզատ Ումէտի ձեռնասուն Միքէ ճարտարարուեստ անձին գծադրել տուաւ Հայկի, Վարդանի, Արա Գեղեցիկի եւ այլ հայ նախարարներու իւղաներկ մեծագիր պատկերները եւ այսպէս՝ այդ խանութը եղած էր հետաքրքրական վայր մը հայութեան, ուր ամէն երեկոյ կը յաճախէր Խ. Պ. Միսաքեան՝ որու քով կը գումարուէր միշտ հայ մտաւորականներու ընտիր խումբ մը եւ ուր տեղի կ'ունենային շատ անգամ գիշերային բանախօսութիւններ:

Այս սրճարանը այրեցաւ 1882ին, եւ հայրս թէեւ կրցաւ դայն վերաշինել, բայց վախցաւ (եւ իրաւամբ) վերագծել տալ նոյն ազգային մեծ դէմքերու պատկերները:

Սելամիէի այս լայն պողոտային վրայ կը գտնուէր կնոջ Մեծ-Հայր (մօրահայր) Յարութիւն Փափաղեանի կամ Տէր Բառնարատեանի շքեղ բնակարանը, ուր առաջին անգամ՝ 1863ին տեղի ունեցած են թատերական ընտիր ներկայացումներ, որոնց մասին միշտ ընտիր ներկայացումներ, որոնց մասին միշտ չեն մոռցած իրենց յիշատակութիւնն ընել հայ թատրոնի պատմութիւնը գրողներ. բայց սխալ է ըսել՝ թէ 1855ին ալ Օտեաններուն տանը մէջ տեղի ունեցած ըլլան նման ներկայացումներ, զի այդ միջոցին հոն Ազգ. Սահմանադրութեան խմբագրիչ Յանձնաժողովը կը գումարուէր, մանաւանդ կը ծեծուէր նաեւ աւելի կարեւոր նպատակի մը ձեռնարկութիւնը, այն էր՝ կազմութիւնը Բաժանորդական ընկերութեան, որ կը հաստատուէր 1859ին Նախագահութեամբ Գր.